ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
Խմբագրական խորհուրդ՝
Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., դոց.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Իգիթ Ղարիբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:
Арман Егиазарян (редактор, д.и.н., доц.), **Арам Симонян** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Артак Мовсисян** (д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Игит Гарибян** (д.и.н., проф.), **Генрих Абраамян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:
Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, associate prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Էդիկ Մինասյան – ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՒՄ (1941-1945 ԹԹ.) 8

***Эдик Минасян** – ВКЛАД АРМЯНСКОГО НАРОДА В ПОБЕДУ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ (1941-1945 ГГ.).* 32

***Edik Minasyan** – THE CONTRIBUTION OF THE ARMENIAN PEOPLE TO THE VICTORY IN THE WORLD WAR II (1941-1945).* 33

Արտակ Մովսիսյան – ՀԱՅ ԷԹՆՈՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԻՆ (ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) 34

***Артак Мовсисян** – ГЕОГРАФИЯ РАСПРОСТРАНЕНИЯ АРМЯНСКОГО ЭТНОСА НАКАНУНЕ НАШЕЙ ЭРЫ (ПО СВЕДЕНИЯМ СТРАБОНА)* 40

***Artak Movsisyan** – THE GEOGRAPHY OF THE SPREAD OF THE ARMENIAN ETHNOS ON THE EVE OF OUR ERA (ACCORDING TO STRABO)* 40

Միքայել Մալխասյան – ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԸՍՏ ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՂՈՄԵՈՍԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ» 41

***Микаэл Малхасян** – ЗАПАДНЫЕ ГРАНИЦЫ ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПО "ГЕОГРАФИИ" КЛАВДИЯ ПТОЛЕМЕЯ.* 47

***Mikayel Malkhasyan** – THE WESTERN BORDERS OF GREATER ARMENIA IN CLAUDIUS PTOLEMY'S "GEOGRAPHY".* 47

Էդգար Վարշամյան – ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՌՈՄԵԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ. ԱՐՇԱԿ Բ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 49

***Эдгар Варшамян** – АРМЕНИЯ В РАЗГАР РИМСКО-ПЕРСИДСКОГО КОНФЛИКТА: ВНЕШНЯЯ ПОЛИТИКА АРШАКА II.* 60

***Edgar Varshamyan** – ARMENIA IN THE MIDST OF THE ROMAN-PERSIAN CONFLICT: THE FOREIGN POLICY OF ARSHAK II.* 61

Արգիշտի Վարդանյան – ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱԿԱԼ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԻՉ 62

***Аргишти Варданян** – МАНВЕЛ МАМИКОНЯН – РЕГЕНТ И УПРАВЛЯЮЩИЙ ЦАРСТВОМ ВЕЛИКОЙ АРМЕНИИ.* 68

***Argishti Vardanyan** – MANVEL MAMIKONYAN – REGENT AND RULER OF THE KINGDOM OF GREATER ARMENIA.* 68

Արման Եղիազարյան – ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՌԱԿՏՄԱՆ ՊԱՏՃԱՌ ԴԱՐՁԱԾ ՄԻ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 70

***Арман Егиазарян** – О ЗАГОВОРЕ, ПРИВЕДШЕМ К РАСКОЛУ БАГРАТИДСКОГО ЦАРСТВА.* 79

***Arman Yeghiazaryan** – ON A CONSPIRACY THAT CAUSED THE SPLIT OF THE BAGRATUNIES KINGDOM.* 79

Արարատ Ստեփանյան – ՓԻԼԱՐՏՈՍ ՎԱՐԱԺՆՈՒՆՈՒ ՊԱՏՎԱՏԻՏՂՈՍՆԵՐԸ 81

***Арарат Степанян** – ПОЧЕТНЫЕ ТИТУЛЫ ФИЛАРЕТА ВАРАЖНУНИ.* 86

***Ararat Stepanyan** – THE HONORARY TITLES OF PHILARETOS BRACHAMIOS.* 86

Սեյրան Զաքարյան – ԱԶԳԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ (ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ ԵՎ ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑԻ).....88

***Сейран Закарян** – ПРОБЛЕМА ХАРАКТЕРИСТИКИ НАЦИИ В ХРИСТИАНСКОЙ ПАРАДИГМЕ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ (ГРИГОР ТАТЕВАЦИ И ГАЗАР ДЖАХКЕЦИ).*.....97

***Seyran Zakaryan** – THE PROBLEM OF CHARACTERIZATION NATION IN THE CHRISTIAN PARADIGM OF ARMENIAN IDENTITY (GRIGOR TATEVATSI AND GHAZAR JAHKETSI).*.....98

Սարգիս Բալդարյան – ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ-ՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ.....99

***Саркис Балдарян** – ЦИРКУЛЯЦИЯ КОММЕРЧЕСКИХ УЧЕБНИКОВ КОНСТАНТА ДЖУГАЕЦИ В ТОРГОВОЙ СЕТИ НОВОЙ ДЖУЛЬФЫ.*..... 106

***Sargis Baldaryan** – THE CIRCULATION OF COMMERCIAL HANDBOOKS OF CONSTANT OF JULFA IN THE TRADE NETWORK OF NEW JULFA.* 106

Արարատ Հակոբյան – 1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿՍՄԱՆ ՕՐՎԱ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (ՊԱՏԵՐԱԶՄԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ)..... 108

***Арарат Акопян** – К ВОПРОСУ О ДАТЕ НАЧАЛА ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 Г. (К 100-ЛЕТИЮ ВОЙНЫ).*..... 117

***Ararat Hakobyan** – ABOUT THE DATE OF THE BEGINNING OF THE TURKISH-ARMENIAN WAR IN 1920 (TO THE 100TH ANNIVERSARY OF THE WAR).*..... 117

Նելլի Մինասյան – 1920 ԹՎԱԿԱՆԻ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՄԱ-ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ..... 118

***Нелли Минасян** – ТУРЕЦКО-АРМЯНСКАЯ ВОЙНА 1920 ГОДА И ПЛАНЫ ПАН-ТЮРКИЗМА.* 123

***Nelli Minasyan** – THE TURKISH-ARMENIAN WAR OF 1920 AND THE PROGRAMS OF PAN-TURKİSM.*..... 123

Սուրեն Ավետիսյան – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒ-ԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ..... 124

***Сурен Аветисян** – ДЕЯТЕЛЬНОСТЬ ОБЩЕСТВА КРАСНОГО КРЕСТА АРМЕНИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.* 131

***Suren Avetisyan** – THE ACTIVITY OF RED CROSS SOCIETY OF ARMENIA IN THE YEARS OF THE GREAT PATRIOTIC WAR.* 131

Առնակ Սարգսյան – ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈ-ՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀՀ 2018 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻ-ՆԱԿՈՎ)..... 132

***Арнак Саргсян** – УЧАСТИЕ В ИЗБИРАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ В РЕАЛИЯХ ДЕМО-КРАТИЗАЦИИ (НА ПРИМЕРЕ ВЫБОРОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ В 2018 Г.).* 139

***Arnak Sargsyan** – PARTICIPATION IN THE ELECTORAL PROCESS IN THE REALITIES OF DEMOCRATIZATION (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA IN 2018 ELECTIONS).*..... 139

Գայանե Թովմասյան, **Ռուբիկ Թովմասյան** – ՁԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԸՆ-ԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (ԱՇԽԱՐՀ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ)..... 140

***Гаяне Товмасян**, **Рубик Товмасян** – БУДУЩИЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТУРИЗМА И ИНДУСТРИИ ГОСТЕПРИИМСТВА В МИРЕ И В АРМЕНИИ.*..... 149

Gayane Tovmasyan*, *Rubik Tovmasyan *– FUTURE TRENDS OF TOURISM AND HOSPITALITY INDUSTRY DEVELOPMENT IN THE WORLD AND IN ARMENIA.* 149

Արշալույս Տետեյան – ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎԵՐՈՒՄ 150

Аршалуйс Тетеян *– ВОПРОС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН И ПРОБЛЕМА НАГОРНОГО КАРАБАХА В РЕЗОЛЮЦИЯХ ЕВРОПЕЙСКОГО ПАРЛАМЕНТА.* 156

Arshaluys Teteyan *– RECOGNITION OF ARMENIAN GENOCIDE AND NAGORNO-KARABAKH PROBLEM IN THE RESOLUTIONS OF EUROPEAN PARLIAMENT.* 156

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ՝ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ (ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՆՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ) 157

Рафик Наапетян *– АРМЯНСКОЕ НАГОРЬЕ - ДРЕВНЕЙШИЙ ЦЕНТР СКОТОВОДЧЕСКОЙ КУЛЬТУРЫ (ПО АРХЕОЛОГИЧЕСКИМ МАТЕРИАЛАМ И АНТИЧНЫМ ПИСЬМЕННЫМ ИСТОЧНИКАМ).* 162

Rafik Nahapetyan *– ARMENIAN HIGHLAND - THE MOST ANCIENT CENTRE OF CATTLE BREEDING CULTURE (ACCORDING TO ARCHAEOLOGICAL MATERIALS AND ANCIENT WRITTEN SOURCES).* 162

Քրիստինա Այվազյան – ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ 163

Кристина Айвазян *– БЛАГОТВОРИТЕЛЬНОСТЬ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ.* 174

Christina Ayvazyan *– CHARITY IN THE ARMENIAN FAIRY TALES.* 175

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Գեղամ Ասատրյան, **Ավետիս Գրիգորյան** – ՄԱՔՐԱՎԱՆՔԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ (XII-XIV ԴԴ.) 176

Гегам Асатрян*, *Аветис Григорян *– ХАЧКАРЫ МАКРАВАНКА (XII-XIV ВВ.).* 181

Gegham Asatryan*, *Avetis Grigoryan *– THE CROSSTONES OF MAKRAVANK (XII-XIV CENTURIES).* 181

Մոնթե Մաթևոսյան – ՋՐԱՌԱՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉՔԱՐԵՐԸ 185

Монте Матевосян *– ХАЧКАРЫ ЦЕРКВИ СВЯТОГО КАРАПЕТА В ДЖРАРАТЕ.* 188

Monte Matevosyan *– THE KHACHKARS OF JRARAT ST. KARAPET CHURCH.* 188

Շուշանիկ Համբարյան – ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Հ[մր] 1970 ԱՎԵՏԱՐԱՆԸ ԵՎ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒՇ ՇՐՋԱՆԻՆ ԲՆՈՐՈՇ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 191

Шушаник Амбарян *– РУКОПИСЬ № 1970 ЕВАНГЕЛИЯ ИЕРУСАЛИМА И ИКОНОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ МИНИАТЮР, ХАРАКТЕРНЫЕ ДЛЯ ПОЗДНЕГО ПЕРИОДА.* 199

Shushanik Hambaryan *– № 1970 GOSPEL OF JERUSALEM AND THE ICONOGRAPHIC FEATURES OF THE MINIATURES CHARACTERISTIC OF THE LATE-PERIOD.* 199

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Հրաձին Վարդանյան – ՍՓՅՈՒՌՔԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔԸ..... 202
Грацин Варданян *– ТИПОЛОГИЯ ДИАСПОРЫ И АРМЯНСКАЯ ДИАСПОРА.* 207
Hratsin Vardanyan *– TYPOLOGY OF DIASPORAS AND THE ARMENIAN DIASPORA.* 208

Ալիկ Ղարիբյան, **Գայանե Գալստյան** – ՀՅԴ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ 209
Алик Гарибян, ***Гаяне Галстян*** *– НАЧАЛО ДЕЯТЕЛЬНОСТИ АРФ ДАШНАКЦУТЮН В США.* 214
Alik Gharibyan, ***Gayane Galstyan*** *– THE BEGINNING OF ARF DASHNAKTSUTYUN ACTIVITY IN THE USA.* 215

Էդգար Հովհաննիսյան – ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ 216
Эдгар Ованесян *– СОЗДАНИЕ ВОСКРЕСНЫХ ШКОЛ КИЛИКИЙСКОГО КАТОЛИКОСАТА И ИХ РОЛЬ В СОХРАНЕНИИ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ.* 225
Edgar Hovhannisyan *– THE FOUNDATION OF SUNDAY SCHOOLS OF THE CATHOLICOSATE OF THE GREAT HOUSE OF CILICIA AND THEIR ROLE IN PRESERVATION OF THE ARMENIAN IDENTITY.* 225

Մարիամ Հակոբյան – ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՒՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ. 226
Мариам Акопян *– ФОРМИРОВАНИЕ ЕПАРХИЙ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ГРЕЦИИ И ИХ АДМИНИСТРАТИВНО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ОПИСАНИЕ В 1920-1930-Х ГГ.* 231
Mariam Hakobyan *– THE FORMATION OF THE GREEK-ARMENIAN DIOCESES OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH AND THEIR ADMINISTRATIVE-DEMOGRAPHIC DESCRIPTION IN THE 1920s AND 1930s.* 231

Նարինե Նուշերվանյան – «ՍՓՅՈՒՌՔ-ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿԻՐ-ՀԱՅՐԵՆԻՔ» ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՌԱՆԿՅՈՒՆԱՁԵՎ ՄՈԴԵԼԸ 232
Нарине Нушерванян *– ТРЕХСТОРОНЯЯ МОДЕЛЬ ВЗАИМООТНОШЕНИЙ "ДИАСПОРА-ПРИНИМАЮЩАЯ СТРАНА-РОДИНА".* 240
Narine Nushervanyan *– "DIASPORA-HOST COUNTRY-HOMELAND" TRIANGULAR MODEL OF RELATIONS.* 241

Գևորգ Ղուկասյան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 242
Геворг Гукасян *– О ЛОББИСТСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В ЗАПАДНОЙ ЕВРОПЕ.* 250
Gevorg Ghukasyan *– ON THE LOBBYING ACTIVITIES OF THE ARMENIAN DIASPORA IN WESTERN EUROPE.* 251

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Հայկազ Հովհաննիսյան, **Կարեն Բայրամյան** – ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԼԱՉԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԻՑ 252

Айказ Оганесян, Карен Байрамян *– НОВОВЫЯВЛЕННЫЕ ДОКУМЕНТЫ ИЗ АРХИВА ЛАЗАРЕВЫХ.* 261

Haikaz Hovhannisyan, Karen Bayramyan *– NEWLY REVEALED DOCUMENTS FROM THE LAZAREVS ARCHIVE.* 261

Հովիկ Գրիգորյան, Հայկ Մխոյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԵՎ ԼԵՈՅԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 262

Овик Григорян, Айк Мхоян *– ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА И ЛЕО.* 273

Hovik Grigoryan, Haik Mkhoyan *– FROM THE LETTERS OF DAVID ANANUN AND LEO.* 274

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Արա Հովհաննիսյան – ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ (ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ) 275

Ара Оганесян *– УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЕ ПРИНЦИПЫ И ОСОБЕННОСТИ КУРСА “ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ”.* 281

Ara Hovhannisyan *– EDUCATIONAL AND METHODOLOGICAL PRINCIPLES AND FEATURES OF THE COURSE “HISTORY OF ARMENIAN DIASPORA”.* 282

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Կարինե Եղիազարյան, Մերի Հովհաննիսյան. ЭДИК МИНАСЯН – ГЕРОИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНОК В ГОДЫ ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ КОНЦА XIX–НАЧАЛА XX ВЕКА, МОСКВА, «ЭДИТУС», 2020, 252 С 283

Էդիկ Մինասյան, Էդիկ Զոհրաբյան. ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ (1956 Թ. ՓԵՏՐՎԱՐ – 1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ), Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2019, 398 ԷՋ 286

Վալերի Թունյան, Արա Հովհաննիսյան. «ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ, ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ», ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ /ԿԱԶՄՈՂ Է. ՄԻՆԱՍՅԱՆ/, Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2020, 212 ԷՋ 288

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 290

INFORMATION ABOUT THE AUTHORS 292

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 294

NOTICE FOR THE AUTHORS 294

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հրաչին Վարդանյան

ՍՓՅՈՒՌՔԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔԸ

Հիմնաբառեր. *սփյուռքի տեսություն, տիպաբանություն, հայ սփյուռք, կոհ սփյուռք, քաղաքակրթություն, տրանսֆորմացիա, համահայկական օրակարգ:*

ՄՈՒՏՔ

1980-ական թթ. վերջից և հատկապես 1990-ական թթ. սկսած գիտական ուսումնասիրությունների առարկա է դարձել սփյուռք երևույթը, ինչը պայմանավորված է ոչ միայն ամբողջ աշխարհում հայրենիքից կամ ծագման երկրից դուրս ապրող մարդկանց թվաքանակի աճով, այլև սփյուռքների դերակատարության, ազդեցության շրջանակների շարունակական ընդլայնմամբ: Եթե 1990-ական թթ. սփյուռքի վերաբերյալ ուսումնասիրություններից շատերի մեկնակետը այն էր, որ սփյուռքը գիտության կողմից պատշաճ քննության չի ենթարկվել, այսօր արդեն կարելի է որոշակի չափով ամփոփել և վերլուծել շուրջ երեք տասնամյակի ընթացքում արված տեսաբանական ընդհանրացումները:

Սփյուռքների վերաբերյալ տեսաբանական ուսումնասիրությունները ծավալվել են հետևյալ չորս հիմնական ուղղություններով՝

1. սփյուռքի սահմանում,
2. սփյուռքների դասակարգում,
3. սփյուռքների համեմատական ուսումնասիրություն,
4. սփյուռքների ծագումն ու զարգացումը բնութագրող փոփոխականների համախմբերի սահմանում՝ վերոհիշյալ խնդիրների լուծման համար[1]:

Նշենք, որ կատարվող գիտական ուսումնասիրություններին զուգահեռ մինչ օրս, այնուամենայնիվ, շարունակվում է բանավեճը, թե արդյոք սփյուռքի վերաբերյալ տեսական վերացարկումները հնարավոր են, կամ արդյոք դրանք կարող են ունենալ գործնական արժեքավոր կիրառություն[2]:

Ստորև կանդրադառնանք սփյուռքների տեսաբանման կամ դասակարգման համար տարբեր հետազոտողների կողմից առաջարկված մոդելներին, ինչպես նաև որոշ խնդրահարույց իրողությունների, որոնք կապվում են մասնավորապես հայ սփյուռքի տիպաբանման հետ:

ՍՓՅՈՒՌՔԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԸ

Սփյուռքի տիպաբանության համար առաջարկված մոդելների հենքում հիմնականում դրված են տարբեր չափորոշիչներ: Տեսական դրույթներ պարունակող առաջին հետազոտություններից մեկում[3] **Ջ. Արմսթրոնգը** տարբերակում է երկու տեսակի սփյուռքներ՝ **մոբիլիզացված** և **պրոլետարական**: Ա. **Մեդամը** սփյուռքները դասակարգում է՝ հիմք ընդունելով սփյուռքյան կազմակերպությունների համախմբվածության և ակտիվության մակարդակը՝ կատարելով **«բյուրեղացված սփյուռք»** և **«հեղհեղուկ սփյուռք»** բաժանումը: Ի տարբերություն «հեղհեղուկ սփյուռք»-ի՝ «բյուրեղացված սփյուռք»-ը գտնվում է կազմակերպական բարձր մակարդակում և

** Հոդվածը ներկայացվել է 15.05.2020 թ., գրախոսվել՝ 01.06.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.06.2020 թ.:*

[1] Տե՛ս Թորոսյան Տ., Վարդանյան Ա., Սփյուռքների համեմատական վերլուծության մոդելավորման խնդիրները, «Հայկական քաղաքագիտական հանդես», № 2(9), 2018, 5-32:

[2] Տե՛ս Sahakyan V., Between Host-Countries and Homeland: Institutions, Politics and Identities in the Post-Genocide Armenian Diaspora (1920s to 1980s), a dissertation submitted in partial fulfilment of the requirements for the degree of Doctor of Philosophy (Near Eastern Studies) in the University of Michigan, 2015, p. 4.

[3] Տե՛ս Armstrong J., Mobilized and Proletarian Diasporas, The American Political Science Review, 1976, vol. 70, № 2, pp. 394-408.

բնութագրվում է անդրազգային ցանցերի առկայությամբ[1]: **Մ. Բրյունոյի** դասակարգումը հիմնված է սփյուռքի կազմակերպական կառուցվածքի վրա, և ըստ այդմ՝ նա առանձնացրել է սփյուռքի գործարար (չինական, լիբանանյան), կրոնական (հրեական) և քաղաքական (պաղեստինյան, տիբեթյան) տեսակները[2]: **Կ. Բաթլերի** դասակարգման հիմքում դրված են ինքնության առանձնահատկությունները՝ կրոնական (հրեական), ազգային (հնդկական), էթնիկ կամ մշակութային (սիկհեր), տարածաշրջանային (կարիբյան), աշխարհամասային (աֆրիկյան)[3]: **Ռ. Քոհենը** առաջարկել է սփյուռքի հինգ տեսակ՝ դրանք անվանելով սփյուռքի «իդեալական» տարբերակներ: Նա առանձնացնում է հետևյալ տիպերը՝ զոհ (օրինակ՝ աֆրիկյան, հայկական, հրեական, պաղեստինյան), աշխատանքային (թուրքական), առևտրային կամ գործարար (չինական, լիբանանյան), կայսերական (բրիտանական, ֆրանսիական) և մշակութային (կարիբյան)[4]: Ռ. Քոհենի առաջարկած դասակարգման հիմքում, փաստորեն, դրված են սփյուռքի ծագման, անդրազգային գաղթերի պատճառները և սփյուռքյան համայնքների կարգավիճակը ընդունող երկրներում: Հակադրվելով Ք. Քոհենին՝ Մ. Էսմանը առաջարկում է սփյուռքները դասակարգել՝ հիմք ընդունելով այն գործառույթները, որոնք սփյուռքները իրականացնում են ընդունող երկրում: Նա նշում է, որ գաղթի առաջացման պատճառները չեն վճռում կամ պայմանավորում այն գործառույթները, որոնք միգրանտները հետագայում կատարում են ընդունող երկրում: Նա առանձնացնում է սփյուռքի հետևյալ տեսակները՝ **նորաբնակ, աշխատանքային** և **ձեռնարկատիրական:** Մ. Էսմանը նշում է, որ, օրինակ, աֆրոկարիբիացիները, որոնց Քոհենը համարում է մշակութային սփյուռք, Մեծ Բրիտանիա և Հյուսիսային Ամերիկա գաղթելուց հետո դարձել են աշխատանքային սփյուռք[5]: Մ. Էսմանի առանձնացրած տեսակներից՝

1. **նորաբնակ սփյուռքը** տեղաշարժվել է ընդունող երկիր՝ գերիշխող դիրք գրավելու մտադրությամբ, օրինակ՝ իսպանացիները, ֆրանսիացիները, անգլիացիները՝ Ամերիկայում, ֆրանսիացիները՝ Ալժիրում, չինացիները՝ Տիբեթում, սիոնիստները՝ Պաղեստինում և այլն,
2. **աշխատանքային սփյուռքը** հիմնականում բաղկացած է մասնագիտական կրթություն և հմտություններ չունեցող անձանցից: Նրանց պարագայում հայրենիքից գաղթելու պատճառը իրենց կամ իրենց երեխաների համար ավելի բարեկեցիկ կենսապայմաններ ստեղծելն է: Աշխատանքային սփյուռքի օրինակներ են հյուսիսաֆրիկացիները՝ Ֆրանսիայում, թուրքերը՝ Գերմանիայում, մեքսիկացիները, ԱՄՆ-ում և այլն,
3. **ձեռնարկատիրական սփյուռքը** բաղկացած է բիզնես փորձառություն, աշխատանքային հմտություններ և կրթություն ունեցող անձանցից: Խտրականության բախվելիս նրանք ստանձնում են մասնագիտական նորարարական դերակատարություն կամ տվյալ երկրի տնտեսության մեջ գտնում են բարձր ռիսկայնության հնարավորություններ, ինչը հնարավորություն է տալիս մասնակցել կամ զարգացնել իրենց մասնագիտական ունակությունները: Ձեռնարկատիրական սփյուռքի օրինակներ են աշխարհասփյուռ չինացիները՝ Հարավարևելյան Ասիայում, ռուսները՝ Իսրայելում, պաղեստինցիները՝ Քուվեյթում:

Անդրադառնալով սփյուռքների դասակարգմանը՝ **Գ. Շեֆֆերը** նշում է, որ չնայած սփյուռքները ունեն բազմաթիվ միանման հատկանիշներ, ժամանակի ընթացքում ձեռք են բերում կառուցվածքային և վարքագծային ուրույն հատկանիշները, ուստի ստատիկ սոցիոլոգիական-ֆունկցիոնալ չափանիշներով նրանց բնութագրելը ճիշտ չէ: Շեֆֆերը էթնոազգային սփյուռքների տարբերակման համար կարևորում է երկու չափորոշիչ. հայրենիքի կարգավիճակը և սփյուռքի «տարիքը»: Համաձայն առաջին չափորոշիչի՝ հայրենիքի կարգավիճակի, սփյուռքները բաժանվում են երկու խմբի **պետականազուրկ սփյուռքներ** (stateless diasporas) և **պետականահենք սփյուռքներ** (state-linked diasporas): Առաջինը ներառում է այն սփռված ազգերին, որոնք չունեն

---

[1] *Տե՛ս Medam A., Diaspora / Diasporas, Archétype et typologie, Revue Européenne des Migrations Internationales, 1993, vol. 9, № 1, pp. 59-66.*

[2] *Տե՛ս Bruneau M., Diasporas, Montpellier, GIP Reclus, 1995.*

[3] *Տե՛ս Butler K., Defining Diaspora. Refining a Discourse. Diaspora, № 10 (2), 2001, pp. 189-219.*

[4] *Տե՛ս Cohen R., Global Diasporas: An introduction Second edition, Routledge, 2008, pp.16-18.*

[5] *Տե՛ս Esman M., Diasporas in the contemporary World, Cambridge, Polity Press, 2009, pp. 15-16:*

պետություն, երկրորդը՝ այն խմբերին, որոնք գտնվելով այլ երկրում, կապ են պահպանում հայրենի պետության մեջ ապրող հայրենակիցների հետ: Այս երկուսից պետականազուրկ սփյուռքները կազմում են ավելի փոքր խումբ՝ ներառելով էթնիկ խմբեր կամ ազգեր, ինչպիսիք են պաղեստինցիները, քրդերը, տիբեթցիներ և սիկհերը: Այս սփյուռքները ձգտում են հաստատել կամ վերահաստատել ազգային անկախ պետությունը: Պետականազուրկ սփյուռքների շարքին են դասվում գնչուները, Եվրոպայում, Հարավային Ամերիկայում և Լատինամերիկայում բնակվող սևամորթները, Աֆրոամերիկյան համայնքը: Այս սփյուռքներում մարդկանց մեծ մասի համար դժվար է միանշանակորեն սահմանել՝որտեղ է իրենց հայրենիքը: Արդի պայմաններում, այս խմբերը ո՛չ ցանկություն, և ո՛չ էլ ուժ ու ռեսուրսներ ունեն ազգային պետություն հիմնելու համար: Պատմական անցյալում պետականազուրկ սփյուռքներ են եղել նաև հայկական և հրեական սփյուռքները: Ավելի մեծ խումբ են կազմում պետականահենք սփյուռքները՝ ներառելով հայրենիքում պետականություն ունեցող բոլոր սփյուռքները՝ անկախ տարիքից, կազմակերպվածության աստիճանից, հայրենիքի և ընդունող երկրի հետ հարաբերությունների բնույթից: Որևիցե ուղղակի կապ գոյություն չունի պետականահենք կամ պետութենազուրկ սփյուռքների և սփյուռքում ապրող մարդկանց սոցիալական ու տնտեսական կարգավիճակի, կազմակերպվածության միջև:

Սփյուռքի դասակարգման երկրորդ չափանիշի՝ սփյուռքի տարիքի համաձայն՝ Գ. Շեֆֆերը սփյուռքները դասակարգում է երեք խմբի **պատմական** (կամ դասական), **ժամանակակից** (կամ արդի) և **նախնական** (միգրանտների այն խմբերը, որոնք կազմակերպված սփյուռք դառնալու նախնական փուլում են): Վերջին խմբում են պակիստանցիները, չինացիները, հարավկորեացիները՝ Պարսից ծոցի շրջանում, ինչպես նաև տարբեր պատճառներով կազմակերպվելու սկզբնական փուլում գտնվող այլ խմբեր, ինչպես օրինակ պաղեստինցիները՝ Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում, ռուսները՝ Բալթյան երկրներում: Խորհրդային Միության փլուզմանը հաջորդող քաղաքական տրանսֆորմացիաների ֆոնին ընթացող գաղթերի, ինչպես նաև աղքատ և հարուստ երկրների միջև մեծացող տնտեսական ճեղքի հետևանքով ևս ի հայտ են եկել նոր պետականահենք սփյուռքներ[1]:

Այսպիսով սփյուռքի տեսաբանների կողմից առաջարկվել են տիպաբանության մի շարք մոդելներ, որոնք սփյուռքների համեմատական ուսումնասիրության տեսանկյունից ունեն կարևոր նշանակություն: Միաժամանակ, սակայն, դրանք հաճախ ստվերում են խորքային և ներքին այն գործընթացները, որոնք տեղի են ունենում սփյուռքներում և սփյուռքների հենքային տարբերությունները հասկանալու համար անհրաժեշտ է նայել տիպաբանման համար պայմանականորեն առաջարկված մոդելներից այն կողմ:

ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔԸ

Հայ սփյուռքը, Ռ. Քոհենի դասակարգման համաձայն, հրեական և աֆրիկյան սփյուռքերի հետ միասին համարվում է «նախատիպային» և «զոհ» սփյուռք, ընդ որում՝ նշված բոլոր սփյուռքներն ունեն երկու հիմնատարր՝ տրավմատիկ սփռում նախնական հայրենիքից և բռնությամբ սփռված խմբի հավաքական հիշողության մեջ հայրենիքի գաղափարի ցայտունություն»[2]:

Անժխտելի է, որ տրավմատիկ իրադարձությունները վճռորոշ նշանակություն են ունեցել հայ գաղթօջախների ձևավորման համար, սակայն ինչպես հայ գաղթաշխարհի պատմության այս կամ այն փուլերի, դրվագների դեպքում, այնպես էլ այսօրվա սփյուռքյան իրականության համար, կարծում ենք, ամենաբնութագրականը «զոհ» բառը չէ: Հանրահայտ է, որ սոցիալական գործընթացներում բառերը չեզոք չեն լինում: Նրանք ոչ միայն անվանում են, պիտակավորում են երևույթները, այլև ազդում են նրանց վրա, վճռում են նրանց միջև եղած հարաբերությունները, ունակ են օժտելու նրանց նոր իմաստներով և հարաբերություններով. բառերն իրենք էլ ձևավորում են իրականություն: Բացի դրանից, ինչպես նշվեց, սփյուռքի տեսաբանների մի մասի մոտեցմամբ՝ սփյուռքի առաջացման, տվյալ ժողովրդի սփռման պատճառը դասակարգման չափորոշիչը չէ. Մ. Էսմանը, որի դասակարգման հիմքում սփյուռքի իրականացրած գործառույթներն են,

[1] *Տե՛ս Cohen R., Global Diasporas, pp. 16-18.*

նշում է, որ այնպիսի զոհ սփյուռք, ինչպիսին հայկականն է, իրականացնում է բիզնես և մասնագիտական (ձեռնարկատիրական) գործառույթներ Կալիֆոռնիայում:

Հայ սփյուռքի վերաբերյալ Ռ. Քոհենի վերոնշյալ բնորոշման համար, թերևս, հիմք են դարձել ոչ միայն բուն պատմական իրադարձությունները, այլև այդ իրադարձությունների խոր արձագանքն ու կնիքն հայ էթնիկ հոգեբանության, պատմագրության, գրականության և, առհասարակ, մշակույթի մեջ: Տարբեր առիթներով մի շարք անդրադարձներ են կատարվել այս իրողությանը. գրականագետ Ս. Սրապիոնյանը նշում է. «Հայոց մեծ եղեռնը իր սոսկավիթխար ծավալներով և իրագործման անմարդկային դրսևորումներով ոչ միայն հանգեցրեց սոցիալ-քաղաքական կեցության ու բարոյական նկարագրի, այլև մի ամբողջ ազգի հոգեկերտվածքի խաթարման՝ պարտադրելով նրան համազգային Ես-ի թերարժեքության և զոհի բարդույթը, որն սպառնում է վերածվել գենետիկ ախտահարման»[1]: Անդրադառնալով սփյուռքի հայկական մոդելի թեմային՝ ազգագրագետ Լ. Աբրահամյանը նշում է, որ Ցեղասպանությունից հետո կազմավորված հայ սփյուռքի համար ցեղասպանությունը դարձավ Արարման մասին իսկական առասպել, և ավելին՝ այն հայ սփյուռքի այնքան զորեղ ցուցիչ հանդիսացավ, որ հայ գիտնականները, որպես կանոն, օգտագործում են սփյուռք բառը՝ հունարեն diaspora բառի հայերեն համարժեքը, միայն սփյուռքի այն հատվածի (իհարկե, ամենամեծ) վերաբերյալ, որը գոյացել է 1915 թ. Ցեղասպանության արդյունքում: Միևնույն ժամանակ, սփյուռքի մյուս հատվածները (ինչպես հին, այնպես էլ ժամանակակից) նշելու համար օգտագործվում է «գաղթօջախ» կամ «գաղթավայր» բառը (համապատասխանաբար՝ «օջախ» կամ «վերաբնակման վայր»)[2]: Հայ պատմագիտության մեջ հայ գաղթաշխարհ և հայ սփյուռք (Սփյուռք) բաժանումը կատարվել է այն հիմքով, որ Ցեղասպանությունից հետո գաղթաշխարհը ձեռք է բերել նոր դիմագիծ, առնչվել նոր խնդիրների, աշխարհայացքային և կազմակերպական առումներով անցում կատարել դեպի որակապես տարբերվող նոր հարթություն[3]: Չնայած այն հանգամանքին, որ սփյուռքը, որպես ինքնաբնութագրող բառ, հայության շրջանում սկսել է օգտագործվել միայն 1920-ականներից, որպես սոցիալական ձևավորում՝ հայ գաղթաշխարհը տիպիկ սփյուռքային երևույթ է, երբ այն դիտում ենք սփյուռքի արդի տեսության և եզրույթի սահմանման համար ընտրված չափորոշիչների պրիզմայով[4]: Ի հավաստումն՝ միայն մեկ օրինակ. սփյուռք երևույթը այլ տիպի սփռված խմբերից (էթնիկ փոքրամասնություններ, փախստականներ, հյուր աշխատողներ և այլն) տարբերակող ամենացայտուն հատկանիշը այն, որ ի տարբերություն այլ խմբերի, սփյուռքը ունի ծագման երկրում պետականության վերահաստատման, կամ հայրենի պետության հզորացման **քաղաքական հանձնառություն,** որը նախաեղեռնյան սփյուռքի կամ հայ գաղթաշխարհի պարագայում իր դրևորումը ստացավ 1770-ականներին, երբ հնդկահայ գաղթօջախում ծնունդ առան լուսավորական և ազգային-ազատագրական գաղափարները: Հայ գաղթաշխարհ և հայ սփյուռք բաժանումը, ակնհայտորեն, պայմանական բնույթ ունի, ավելին՝ հայ սփյուռքի քաղաքակրթական առաքելությունը բացահայտելու համար[5], անհրաժեշտ է որպեսզի այն դիտարկվի ամբողջության մեջ՝ իր նախնական ձևավորման ժամանակաշրջանից՝ IV դարից սկսած: Անկախ տվյալ սփյուռքի առաջացման ժամանա-

---

[1] *Սրապիոնյան Ս., 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի օրերի եղերական պատկերները Ավ. Ահարոնյանի «Իմ գիրքը» երկում, «Բանբեր Երևանի համալսարանի», «Բանասիրություն», 2010, 131.2, էջ 32-40:*

[2] *Տե՛ս Աբրահամյան Լ., Հայաստանը և հայկական սփյուռքը. տարանջատում և հանդիպում, «21-րդ դար», № 1(11), 2006, էջ 38:*

[3] *Տե՛ս Եղիազարյան Ա., Հայ սփյուռքի պատմության պարբերացումը, «Հայագիտության հարցեր», 2014, № 2, էջ 33: Տե՛ս նաև Մելիքսեթյան Հ., Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), Ե., 1985, էջ 3:*

[4] *Սփյուռք եզրույթի սահմանման և չափորոշիչներին վերաբերյալ մանրամասն տե՛ս Վարդանյան Հ., Սփյուռքի սահմանումը և եզրույթի իմաստային ընդլայնման պատճառները ըստ Խաչիկ Թեոլեոյանի, «Հայագիտության հարցեր» հանդես, № 2 (8), 2016, էջ 95-108: Տե՛ս նաև Վարդանյան Հ., Գաղթականությանը վերաբերող մի քանի բառերի եզրութային արժեքը հայերենում, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, 1.5 (15), 2016, էջ 124-128:*

[5] *Տեծս Հովհաննիսյան Է., Սփյուռքը և դրա քաղաքակրթական դերակատարությունը, «Հայկական քաղաքակրթության ուսումնասիրման արդի հիմնախնդիրները», գիտաժողովի հիմնադրույթներ, Ե., 2016, էջ 25-27:*

կաշրջանից և պատճառներից, եթե բացակայում է սփյուռքի ընկալումը որպես հայրենիքի շարունակություն, ապա դժվար է նրա դերը գնահատել սեփական քաղաքակրթական արժեքների պահպանման, ինչպես նաև արտահանման տեսանկյունից[1]:

Սփյուռքների դասակարգման մեջ հայ սփյուռքի տիպաբանման վերաբերյալ ուշագրավ դիտարկումներ ենք կատարել Տ. Թորոսյանը և Ա. Վարդանյանը՝ մասնավորապես նշելով, որ դասակարգման համար առաջարկված մոդելներում սփյուռքների գործունեությունը ավելի լիարժեք բնութագրելու համար լրացումների անհաժեշտություն կա, քանի որ մի շարք ժամանակակից գործընթացների՝ գլոբալացման, նոր աշխարհակարգի ձևավորման և հետխորհրդային տրանսֆորմացիայի ազդեցությամբ հասարակական կյանքում տեղի ունեցող զարգացումները ստացել են ոչ միայն աննախադեպ արագություն, այլև հանգեցրել են որակական փոփոխությունների: Առաջարկվում է սփյուռքների դասակարգման քոհենյան մոդելը լրացնել ևս մեկ տեսակով՝ **տրանսֆորմացվող սփյուռք** անվանմամբ, որին էլ պատկանում հայ սփյուռքը: Հիմք է ընդունվում այն, որ ԽՍՀՄ փլուզումից հետո հայ սփյուռքը կրել է որակական փոփոխություններ. ի հայտ են եկել սփյուռքի համալրման նոր երկու հոսքեր՝ աշխատանքային (արտագաղթ հայրենիքից՝ ԽՍՀՄ փլուզումից հետո ստեղծված իրավիճակի հետևանքով) և զոհ-սփյուռք (Սումգայիթի, Բաքվի, Գանձակի ջարդերի, էթնիկ զտումների, տեղահանությունների հետևանքով ձևավորված) բնույթն ունեցող: Հեղինակներն ընդգծում են, որ եթե մինչ ԽՍՀՄ փլուզման հետևանքով առաջացած արտագաղթը գրեթե միասեռ էր և ուներ զոհի կարգավիճակ, ապա հետխորհրդային շրջանի արտագաղթի արդյունքում նաև աշխատանային սփյուռքի և այն կարելի է բաժանել հինգ խումբ համայնքների՝ Ռուսաստանի (գրեթե միայն աշխատանքային սփյուռք), Եվրոպայի (աշխատանքային սփյուռքի բացահայտ գերակշռություն), Միացյալ Նահանգների (գրեթե հավասարակշռություն զոհի կարգավիճակ ունեցող և աշխատանքային սփյուռքների միջև), Ֆրանսիայի (զոհի կարգավիճակի բացահայտ գերակշռություն), Մերձավոր Արևելքի (միայն զոհի կարգավիճակ): Ընդ որում, այդ խմբերն ունեն միմյանցից էականորեն տարբերվող պատկերացումներ ու մոտեցումներ հայրենիքի և հյուրընկալող երկրի, այլ առանցքային հարցերի վերաբերյալ[2]: Այս դիտարկումները հենվում են հայ սփյուռքի համալրման նախադրյալների վրա, սակայն ինչպես ներկայումս, այնպես էլ պատմական անցյալի տարբեր փուլերում տեսանելի են նաև հայ գաղթաշխարի և սփյուռքի ներքին տրանսֆորմացիաների: Բնութագրական է Նոր Ջուղայի օրինակը, որը XVII-XVIII դդ. դարձել էր հայ վաճառականության՝ Հարավարևելյան Ասիայից մինչև միջերկրածովյան ավազանի նավահանգիստները ձգվող ցանցի կենտրոնը: Այն, ծնունդ առնելով որպես զոհ սփյուռք, դարձել էր հարուստ առևտրային սփյուռք[3]: 1080 թ. հիմնադրված Կիլիկիայի հայկական իշխանապետությունը պատմության մեջ այն եզակի դեպքերից է, ինչպես Սինգապուրը, երբ սփռված փոքրամասնությունը տվյալ տարածքում հասնում է գերիշխանության և ստեղծում պետություն: Ընդ որում հայերը Կիլիկիայում զանգվածային կերպո հաստատվել էին նախընթաց դարերում՝ լինելով անբարենպաստ պայմաններում[4]: Ներկայումս հայ սփյուռքը ներքին զարգացման իմաստով ենթարկվում է անցման՝ աքսորային ազգից դեպի սփյուռքային անդրազգի (from exilic nationalism to diasporic transnationalism): Այդ անցումը սփյուռքյան կառույցների, հաստատությունների ունեցած օրակարգերի, դիսկուրսների, ռեսուրսների համար մարտահրավեր է, որը փոփոխությունների պատճառ է դառնում և հաճախ ստիպում ստեղծել նոր կառույցներ[5]:

---

[1] Տե՛ս նույն տեղը:

[2] Տե՛ս Թորոսյան Տ, Վարդանյան Ա., Տրանսֆորմացվող սփյուռքների առանձնահատկությունները. հայկական սփյուռքի դեպքը, «Հայկական քաղաքագիտական հանդես», 2018, № 1(9), էջ 5-28:

[3] Տե՛ս Aslanian S., From the Indian Ocean to the Mediterranean: The Global Trade Networks of Armenian Merchants from New Julfa, Berkeley, 2011:

[4] Տե՛ս Tölölyan Kh., Elites and Institutions in the Armenian Transnation: Conference on Transnational Migration: Comperative Perspectives. Princeton University, 2001,

(http://www.transcomm.ox.ac.uk/working%20papers/WPTC-01-21%20Tololyan.doc.pdf):

[5] Տե՛ս նույն տեղում:

Հայկական քաղաքակրթության արդի դարաշրջանի ներկա փուլը բնութագրելու համար առաջարկվել է օգտագործել ցանցային քաղաքակրթություն բնորոշումը[1]: Հայկական իրականության մեջ, որտեղ առկա են ազգային-պետությունը և բազմամիլիոն սփյուռքը, առկա է համահայկական քաղաքակրթական միջավայրի ձևավորման հրամայականը, միջավայր, որտեղ կպահպանվի և կզարգանա հայկական քաղաքակրթությունը[2]: Սփյուռքի հայ մտավորականները ընդգծում են, որ հայկական քաղաքակրթության ինքնապահպանության և ինքնաթամացման ուղղությամբ թիրախային աշխատանքներ տանելու առումով արդեն իսկ առկա են կազմակերպման համար անհրաժեշտ հաստատությունները, կառույցները (դպրոցներ, ակումբներ, եկեղեցիներ և այլն), պակասում է XXI դ. համար անհրաժեշտ ծրագրակազմը՝ որի մշակումը պահանջում է պատշաճ խորությամբ մտածված և դասավորված արժեքներ, գաղափարներ, խորհրդանիշներ[3]:

Ամփոփելով՝ նշենք, որ սփյուռքների դասակարգման համար տարբեր տեսաբանների կողմից առաջարկված մոդելներում կարելի է որոշել հայ սփյուռքի տեսակը, սակայն ակնհայտ է, որ տրանսֆորմացիաների ենթարկվող հայ սփյուռքի տիպաբանումը սոսկ գիտական, տեսաբանական խնդիր չէ. այն վերաբերում է հայության քաղաքակրթական հեռանկարին՝ հանգելով հավերժական հարցադրմանը՝ «ով ենք մենք», «որտեղից ենք գալիս», «ուր ենք գնում»: Ինչպիսի դիմագիծ կունենա տրանսֆորմացվող հայ սփյուռքը, մեծապես կախված է էլիտաների աշխատանքից, աշխարհի հայության, սփյուռքյան խիստ բազմաշերտ համայնքների համար ապագային միտված համահայկական միասնական օրակարգ մշակելու հրամայականից:

Грацин Варданян, ТИПОЛОГИЯ ДИАСПОРЫ И АРМЯНСКАЯ ДИАСПОРА. Ряд исследователей затрагивает проблему типологии диаспоры, предлагая различные модели классификации диаспоры на основе разных критериев: причины происхождения диаспоры и транснациональных миграций, уровень единства и активности организаций диаспоры, организационная структура диаспоры, наличие или отсутствие государственности на родине, основной вид деятельности диаспоры и т.д.

В статье рассматривается определение типа армянской диаспоры по предлагаемым классификационным моделям, и особенно проблематичной представляется классификация армян-

---

[1] Տե՛ս Սաֆրաստյան Ռ., Հայկական քաղաքակրթություն. տեսական հացադրումներ, «Հայկական քաղաքակրթության ուսումնասիրման արդի հիմնախնդիրները», գիտաժողովի հիմնադրույթներ, էջ 28-29:

[2] Տե՛ս Եղիազարյան Ա., Հայկական քաղաքակրթությունը և հայության պատմական հեռանկարը, «Հայկական ինքնության խնդիրները 21-րդ դարում», գիտաժողովի նյութեր, Ե., 2013, էջ 82:

[3] Տե՛ս «Հայերը 2115 ին: Ռազմավարական ուղղություններ 21-րդ դարի համար, Սեմինարի վեկույց»: (Զեկույցը պատրաստվել է Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի Հայկական համայնքների ծրագրի կողմից՝ 2014թ. հոկտեմբերին Լիսաբոնում կայացած սեմինարի արդյունքներով, որին մասնակցել են Սփյուռքի անվանի մտավորականներ և փորձագետներ: Զեկույցի և կազմակերպված քննարկման նպատակն է եղել հայության շրջանում խթանել հանրային քննարկումները XXI դ. հայ ժողովրդի առջև կանգնած կարևորագույն խնդիրների շուրջ՝ խրախուսելով ապագային միտված մտածողությունն ու ուսումնասիրությունները):

Վերոնշյալ խնդիրների լուծման համար ՀՀ-ում Ա. Եղիազարյանի կողմից մատնանշվել են հետևյալ հիմնական ուղղությունները՝ համազգային քաղաքակրթական միջավայրի ձևավորում, համահայկական-հասարակական գործունեության կազմակերպում, ղեկավարում և արդյունքների բաշխում, ինքնապահպանության և ինքնահաստատման ճիգերի իրացում, քաղաքակրթական ինքնուրույնության պահպանման մեխանիզմների մշակում և գործադրում՝ քաղաքակրթական փոխհարաբերություններում սահմանելով ազգային հիմնարար, ինչպես նաև կարգացման ու լրացման «կարիք ունեցող» արժեքները, ազգային մշակութային հենքի աստիճանական կարգացում՝ հաղթահարելու ՀՀ-ի և սփյուռքի՝ տարաբնույթ ազդակների հետևանքով քաղաքակրթական առումով միմյանցից օտարվելու գործընթացը, ինքնաթարմացման և ինքնահարստացման ռազմավարության որդեգրում՝ հայկական քաղաքակրթության կարգացման և համաշխարհային կարգացած քաղաքակրթությունների հետ համաբայլ ընթացքն ապահովելու համար (տե՛ս Եղիազարյան Ա., Հայկական քաղաքակրթությունը և հայության պատմական հեռանկարը, «Հայկական ինքնության խնդիրները 21-րդ դարում», գիտաժողովի նյութեր, Ե., 2013, էջ 82):

ской диаспоры как диаспоры-жертвы. Такой подход обусловлен тем, что в данном случае типология является не просто научной, теоретической проблемой. Это относится к ряду вопросов, связанных с цивилизационным взглядом и цивилизационными вызовами для армян.

Ключевые слова: *теория диаспоры, типология, армянская диаспора, диаспора-жертва, цивилизация, трансформация, всеармянская повестка дня.*

Hratsin Vardanyan, TYPOLOGY OF DIASPORAS AND THE ARMENIAN DIASPORA. A number of researchers have touched upon the issue of Diaspora typology, suggesting different models for the classification of diasporas based on different criteria: causes of diaspora emergence and transnational migrations, level of unity and activity of diaspora organizations, structure of diaspora organization, existence or absence of statehood in the homeland, main type of diaspora activity, etc.

The article touches upon the determination of the Armenian Diaspora type suggested in the classification models, deeming particularly problematic the classification of the Armenian Diaspora as a victim diaspora. Such an approach is conditioned by the fact that in this case the typology is not just a scientific, theoretical issue. It refers to a number of issues related to the civilization perspective and civilization challenges of the Armenians.

Key words: *diaspora theory, typology, Armenian Diaspora, victim diaspora, civilization, transformation, pan-Armenian agenda.*